



Զապել Եսայան

Երբ այլևս չեն սիրեր

Պատուանդանը

Շաբաթներ անցեր էին եւ կեանքը կը սահէր աղքատիկ թաղերու մէջ իր տափակ միօրինակութեամբ, գործերը քիչ մը բացուեր էին մեղմ օդերուն շնորհիւ եւ չարչրկուած դէմքերու վրայ քիչ մը յոյս եւ ոգեւորութիւն կ'երեւար: Միւս կողմէ սակայն հիւանդութիւնները պակաս չէին ու մանաւանդ երկար ատենէ ի վեր պատկողները, կարծես չդիմանալով այս հիւանդագին եւ խաբուսիկ օդերուն փոփոխականութեան, մէկիկ մէկիկ կը մեռնէին:

Հասունները կ'իյնան կոր, կ'ըսէին կիները պատուիսանէ պատուիսան, երբ արեւէն հրապուրուած պահ մը ձեռքերնուն գործը կը ձգէին եւ կուգային երկայն շունչ մը առնելու:

Թաղին եկեղեցիին գանգակը, ամէն օր եւ երբեմն օրը մէկ-երկու անգամ, կը դօղանջէր յուղարկատրութիւններու յատուկ տխրագին եւ դանդաղ հնչիւններով:

Չօրատր հարբուխի մը հետեւանքով Եւփիմէ այ հիւանդացեր էր եւ մայրը գինքը հանգիստ թողեր էր այդ օրերը, բնաւ չխօսելով ամուսնութեան ծրագիրներու վրայ, ու ինքը ժամանակ ունեցեր էր անդրադառնալու իր հոգեկան վիճակին՝ ինչպէս որ եռանդով եւ սրտագին սիրեր էր Խաչիկը, այնպէս այ հիմակ ինքզինքը անտարբեր կը զգար անոր նկատմամբ եւ իր հոգեկան այս երկու հակասական վիճակներուն մէջ անկեղծութիւնը ա'յնքան բացարձակ էր որ չէր հասկնար թէ ինչո՞ւ յանցատր պիտի նկատուէր Խաչիկին հանդէպ. իր հոգիին խորերէն անհետացեր էին յուզումի եւ խռովքի այն սարսուռները որ երբեմնի

սիրահարին ներկայութիւնը, անունին արտասանուիլն իսկ առաջ կը բերէին: Երբ կը պատմէին Խաչիկին կատարած խաղբութիւնները, Եւփիմէին արիւնը հաղարտ կը մնար, մինչ գարմանալով կը յիշէր թէ ի՞նչպէս, երբ անոր վրայ աննպաստ բան մը կը լսէր ժամանակաւ, ականջներովը կը կարմրէր ու պատրաստ կը զգար ոգի ի բոնն գայն պաշտպանելու. հիմակ ոչ միայն չէր անչնար անոր ըրածներէն, այլ նաեւ իր այսօրուան անտարբերութեանը արդարացունը կը գտնար անոր այդ խայտառակ վիճակին մէջ: Միակ փափաք մը ունէր, գայն չտեսնալ, անոր չհանդիպիլ: Ներքնապէս գիտէր որ Խաչիկ կը տատապէր իրեն համար. երբեմն կայծակը արագութեամբ կ'անդրադառնար այդ մտածումին, բայց առանց ժամանակ ձգելու որ սիրտը խանդաղատէր, կը խորհէր ուրիշ բանի վրայ: Ու եթէ Խաչիկին իրեն համար կրած տատապանքը զինքը անտարբեր կը թողոր, միւս կողմէ անիկա գերծ էր արուեստակեալ աղջկան մը հոգեկան սնապարծութիւններէն. միայն նիւթական եւ առօրեայ հանգիստի առաւելութեանց տենչանքները եւ յոյսեր կը տիրապետէին իրեն եւ ո՛րքան կ'անդրադառնար թէ իր մանկութենէն ի վեր զրկուած էր անոնցմէ, ա՛յնքան բուռն կերպով կը ցանկար անոնց իր առողջ եւ անարուեստ աղջկան բոլոր ախորժակները տրուած էին եւ ի՞նչ արագ ու ճապուկ քայլերով պիտի կոխտտէր Խաչիկին սիրտը ու անցնէր, անմիջապէս որ հնարաւոր ըլլար: Որովհետեւ կը զգար թէ իրենց ծրագիրներուն յաջողութեան միակ արգելքը Խաչիկը կրնար ըլլալ եւ այա գայրոյթը կ'անցնէր իր հոգիին մէջէն չորցնելով ոեւէ բարեացական զգացումի սկզբնաւորութիւն:

Ու հիմակ որ այլ եւս չէր սիրեր գայն, ի՞նչպէս կը չափազանցէր անոր տգեղութիւնները, ծիծաղելիութիւնները, ձայնին ու շարժումներուն միամտութիւնը, կոպտութիւնը, աւելի եւս անրապնդուելու համար իր ցրտութեան մէջ: Բոլոր այն աննշան մանրամասնութիւնները, որոնք իր սիրող սրտին բարբախումները արագացուցեր էին, որոնք խանդաղատանքով եւ տեսակ մը զինովութեամբ պարտուեր էին զինքը, ձեռքը ձեռքին հպել, շունչը զգալ ծոծրակին վրայ, գաղտագողի մէկ նայուածքը որսալ եւ կայծակի մը տետողութեամբ հաղորդակցութեան մտնալ սիրականին տարփաւէտ էութեան հետ, զգալ խօսքերու քողարկուած իմաստը, փառաւորուիլ ու երջանկանալ անոնցմով, պճնուիլ, շողոքորթի ակնարկութենէ մը եւ սիրականին մէկ գովասանքը ամենաթանկագին գարդարանքէ վեր արժեցնել. բոլոր ասոնք, բոլոր ճշմարիտ

սիրոյ խուսափուկ, անկայուն, դիրաբեկ հրապոյրները, պատրանքները, զգայնութիւնները իրենց բեհեզներէն մերկացած, իրենց լոյսէն զրկուած ոչ միայն չէին օգներ Եւփիմէի մեռած սէրը արթնցնելու, այլ նաեւ իբր ծիծաղելի խրտուիլակներ կը ներկայանային անոր. ուրեմն, բոլոր այն անմբռնելի պատճառներով իսկ, որոնցով Խաչիկը սիրած էր, այսօր այլեւս գայն չէր սիրեր ու իր կնոջական հոգին փոխանակ գիտակցելու իր փոփոխականութեան, իր բնածին եւ ճակատագրական թերութեան, կ'ապաստանէր իր գայրոյթներուն եւ ապագայի մտահոգութիւններուն մէջ.

Առաւօտ մը կանուխ, եբր Եւփիմէ քունէն նոր արթնցած, տարտամօրէն կը խորհէր այս բաներուն վրայ, մայրը հագուած, եւ մեկնելու պատրաստ եկաւ քովը.

Եւփիմէ՛, ըսաւ գործերնիս սխալէ՞ք է ամա, ես այս ատոտու ժամ պիտի երթամ, ետքէն ալ տեղ մը պիտի հանդիպիմ... Ելլաս նէ առաջ ճերմակ գէմիները ձեռք ամ:

Եւփիմէ հասկցաւ մայրը վարպետին կնոջ հիւանդտես կ'երթար, կամ աւելի ճիշտը կ'երթար հասկնալու թէ «ո՛ր տեղուանքն է»: Այդ հրէշային անհամբերութիւնը որ ամբողջովին գրաւած էր երկու կիները՝ ռեւէ խղճի խայթ չէր պատճառեր անոնց պահ մը իսկ չէին անդրադառնար թէ ի՞նչ քստմնելի սպասում էր իրենցը. ընդհակառակը, կարծես մահամերձն էր որ յանցաւոր էր, յուսահատօրէն կը կառչէր կեանքին, պահ մը առաջ չէր մեկնէր այս աշխարհէս իր տեղը ուրիշին տալու համար: Ու առաւօտէն մինչեւ իրիկուն, երկու կիները կը սպասէին գոյժին որ աւետիս մը պիտի ըլլար իրենց համար ու իրենց անհամբերութիւնը խաբելու նպատակաւ, անդադար կը խօսէին հիւանդին վրայ, երբեմ կեղծ կարեկցութեամբ, երբեմն նոյնիսկ գայրոյթով.

Աստուած իր ըրածը գիտէ ամա, ատանկ ապրիլը ապրի՛լ է... մեռնի նէ լոյս կ'ըլլայ, իրեն ալ մեղք է քովիներուն ալ:

Նեմգոր հանրմը գացեր տեսեր է, կ'ըսէր Եւփիմէ մօրը պատասխանելով՝ մէկ քովէն միւսը չկրնար կոր դառնալ եղեր:

Թեզզկեահին առաջ դէմ դէմի նստած, անոնց վրձինները մէկ կողմէն արագօրէն կը ներկէին, երեսան բերելով գունագեղ եւ ֆանթասթիկ ծաղիկներ գծուած եագմաներուն վրայ:

Մէյ մը երթամ, աչքովս տեսնեմ, ըսեր էր Երանիկ հանրմ նախորդ օրը եւ ահա ինչո՞ւ Եւփիսէ գիտէր թէ մայրը ուր պիտի հանդպէր:

Ժամէն ելլալուն ուր թերեւս աղօթած էր իր ծրագիրներուն յաջողութեան համար Երանիկ հանրմ ուղղութեամբ վարպետին տունը: Նոր խալֆան դուռը բացաւ եւ հարցուց թէ ի՛նչ կ'ուզէ. բայց անիկա առանց պատասխանելու սանդուխներէն բարձրացաւ եւ շիտակ մտաւ հիւանդին սենեակը:

Բագմոցին անկիւնը, իրարու վրայ գետեղուած անկողիներու վրայ բարձրացած, հիւանդ, կմախքի պէս վտիտ, պատկեր էր. անոր սեւ, սուր եւ տենդոտ աչքերը ուղղութեամբ դէպի դուռը երբ անիկա ճոնչեց. հիւանդը ճանչցաւ իրենց վաղեմի բանուորուհին, ուզեց ժպտիլ, բայց ահա ցնցուեցաւ երկարատեւ ու տաժանելի հագի տագնապով մը: Երանիկ հանրմ ինքնիրեն արթո՞ւն մը առաւ, նստեցաւ, գլխովը բարեւ մը տալով հիւանդին մօրը որ բագմոցին միւս անկիւնը կզկտած էր. անիկա ուրիշ զակի մը մահով արդէն սգաւոր, սեւ պօյամայի տակէն երեսան կը բերէր մասունքի պէս ճերմակած, նիհար ու գրեթէ թափանցիկ դէմքը. երկու ձեռքերը ծոցը, վիզը ծուռ, արցունքոտ աչքերով կը հետեւէր աղջկանը արշարանքին: Սրահին մէջ, ամէն կարգի դեղերու, ասպականուած օդի, հիւանդի հօտերու անհանդուրժելի նողկալի խառնուրդ մը ոչ թէ կը ծփար, այլ կարծես թէ կը թանձրանար: Երանիկ հանրմ այս սոսկալի սենեակին մէջ բոլոր հոգուով սարսափած, շուարած մնաց պահ մը: Երբ հագի տագնապը անցաւ, գլուխը դարձուց դէպի հիւանդը եւ հարցուց մեղմ ձայնով մը:

Ջարուկ հանմա, ինտո՞ր ես...

Ա՛խ... ախ... Երանիկ հանրմ, հառաչեց դժբաղդ կինը ու երկու այտոսկրներուն սուր մասերը կարծէս ներքին կրակէ մը կարմրեցան, անոր գլուխը գոր կարելի էր այլեւս գանկը կոչել, գրեթէ կորսնցուցած էր մազերը, այնքա՛ն երկար օրեր եւ այնքա՛ն տաժանելիօրէն շփուեր էին բարձերուն:

Ա՛խ... ա՛խ... կրկնեց սրտագին հառաչանքով, աս ի՞նչ ցաւ էր որ դարմանը չգտանք, անցնող թռչունէն ճար սպասեցի, անցնող ամպերէն դարման յուսացի՛... Ա՛խ... ա՛խ ինծի կը սիրէք նէ, աղօթք ըրէք որ ալ չքաշեմ... ալ օր մը առաջ տեղս տեղաւորուի՛մ...

Բագնոցին միւս անկիւնը ատլի տժգոյն, ատլի կզկտուած, պատաւին դէմքը կարծես պիտի հալէր ու անհետանար սեւերուն մէջ, ա՛յնքան անհկա ողողուած էր արցունքներով, թէն ոչ իսկ պգտիկ հեծեծանք մը կը թռէր անոր խորը ինկած շրթներէն, որովհետեւ խեղճ կինը շատոնց է որ վարժուեր էր անշշուկ արտասուելու, աղջկանը ուշադրութիւնը չգրաւելու համար:

Երանիկ հանրմ խոովեցաւ այս հոգեկան եւ ֆիզիքական սուկալի տատապանքներուն ի տես. շփոթ կերպով մը զգաց թէ չքաւորութեան բռնաւոր լուծէն դուրս կան նաեւ ուրիշ ցաւեր, անդարմանելի վիշտեր. ու կարծես անոր մտածումներուն պատասխանելու համար հիւանդը կ'ըսէր մահամերձի ծանր, պղտոր եւ խոովիչ ձայնով.

Ճիտէս տոպրակ կախէի, դուռնէ դուռ մուրայի, աս տերտին տիւշկին չըլլայի՛, ա՛խ... ա՛խ...

Կրկին անգամ հագի տագնապը խափանեց ձայնը ու անհկա այնքան ուժգնօրէն կը ցնցուէր որ կմախսացած անդամները կը ցաւէին եւ շնչասպառ եղած, ձայնը հագէն խոպոտած, ճիշէր կ'արձակէր «ա՛յ... ա՛յ...», մինչ մայրը կը նայէր գլուխը ձգտած, կարծելով թէ աղջկան վերջին գալարումն էր, ու անկարող ռեւէ օգնութիւն ընելու անոր, շատոնց ի վեր սպառած ըլլալով բոլոր ամոքիչ միջոցները:

Աստուած առողջութիւն տայ, Չարուկ հանրմս՝ կ'աղէկնաս, մէկ օրուան մէջ քաշածներդ կը սոռնաս... մնաք բարով: Աստուած քեզի ալ ուժ ու զօրութիւն տայ, տո՛ւտու...

Հիւանդը հագի տագնապէն ետքը, տեսակ մը ապուշ թմրութեան մէջ ինկած, ընդլայնած աչքերով կը նայէր հիւրին առանց բան մը հասկնալու. ականջները կը բզգային եւ խոռոչացած կոպերուն վրայ կանգ առած երկու արցունքի կաթիլներ,

որոնք ժայթքեր էին իր հազարու համար ըրած ճիգէն, արեւներու պէս կը փայլէին իր գառանցող աչքերուն, երբ կ'ուզէր նայուածքը անդին դարձնել, միջոցին մէջէն արագօրէն կ'անցնէին լուսեղէն պղպջակներ, ու այլեւս չէր գիտէր թէ ականջներու բզզիւնն էր, թէ աչքերուն առաջքը պարող լուսեղէն պղպջակներն էին որ կը զգար. մտի՞կ կ'ընէր. թէ կը նայէր. որովհետեւ իր տեսողութեան եւ լսողութեան մէջ տարօրինակ շփոթութիւն մը առաջ եկած էր եւ ասիկա անանկ դաժան էրեւոյթ մը կուտար հիւանդին որ Երանիկ հանրմ խորհեցաւ.

Հոգեառները կը տեսնայ կո՛ր... վա՛յ գլխուն:

Ճշմարտապէս փղձկած էր, բայց աճապարեց մէկնելու ինքն ալ տժգուններ էր եւ գլխու պտոյտ մը զգար եւ գոջաց եկած ու այդ ահռելի պատկերը տեսած ըլլալուն, բայց քանի՛ քալեց ձմեռնային գաղջ արեւին ներքեւ, ա՛յնքան հետզհետէ իր գործնական կնոջ բնագոյները յաղթահարեցին եւ կագողորուեցաւ, որոշեց որ Եւփիմէին չհաղորդէ մանրամասնութիւններ, որպէս զի անոր հոգին ալ չպղտորի եւ հետզհետէ նոյն իսկ ուրախացաւ մտածելով թէ վարպետին կնիկը իրաւամբ շատ երկար չէր կրնար քաշել:

Երբ տուն մտաւ, դեռ չհանուած, նոյն իսկ գլխուն քօղը չհանած, նստեցաւ բազմոցին վրայ ու աղջկանը հարցական նայուածքին պատասխանեց.

Լանցած բան է, ալ հող կը հոտի կոր, այս գիշեր կ'անցնէ շանցնէր բան մը:

Շրթները չորցած էին եւ ձեռքերը թեթեւ մը կը դողային, բայց հետզհետէ սիրտը լեցուեցաւ յոյսերով եւ ուրախութեամբ. աղջիկն ալ գոհ էր եւ անոր ամէն մէկ շարժումներուն մէջ կը զգացուէր տեսակ մը տենդագին ոգեւորութիւն:

Պահ մը ետքը երբ դէմ դիմաց կը բանէին, ալ եւս իրենց մտքին մէջ առատութեան եւ հանգստաւեր կեանքի հեռանկար մը ունենալով, գործը ծանր կուգար իրենց, կ'անհիծէին ու կը հայոյէին.

Կրողը տեսնայ երեսնիդ, աս ի՛նչ ըեսիմներ են:

Չարի պէս, ամէն ատեն ճերմակ գէմին կը դրկեն:

Ճերմակն ալ թերմաշ մնայ, կարմիրն ալ:

Բայց անոնց ձեռքերը արագ արագ կը շարժէին, կարծես թէ ո՛րքան աճապարէին, ա՛յնքան շուտով պիտի ելլէին չքատրութեան դժոխքէն եւ այն թշուառութիւնը, որուն մէջ ապրած էին ցարդ, այնքան մոայլ, այնքա՛ն ցրտին եղած էր որ անկէ ազատելու իրենց անհամբերութեան մէջ չէին անդրադառնար թէ գերեզմանաքար մըն էր այն պատուանդանը որուն վրայ կոխելով պիտի բարձրանային, կեանքի արեւը եւ լոյսը վայելելու: